355.5
P-27

[1935]

1 MAR 2010

# ԲԳԿԲ ԲՈԼՈՐ ՔԱՂՕՐԳԱՆՆԵՐԻՆ ՈՒ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Լենին-Ստալինի մեծ կուսակցության պատմությունը խորապես գիտենալը, հակակուսակցական բոլոր խմբավորումների դեմ մեր կուսակցության մղած պայքարի տակտիկայի ու յեղանակների ուսումնասիրելը կոմունիստների ու կոմյերիտականների բոլշևիկյան դաստիարակության և հեղափոխական աչալրջության բարձրացման կարևորագույն միջոցն է: Մինչդեռ կուսակցության պատմության դասավանդման դրվածքի հետազոտումը մի շարք զորամասերում հայտաբերեց մի շարք խոշոր թերություններ:

Չնայած ԲԳԿԲ Քաղվարչության կտրական ցուցումներին՝ պրոպագանդիստական աշխատանքի համար կուսակցական կազմակերպությունների լավագույն ուժերին ջոկելու մասին, մարքս-լենինյան պատրաստության շատ խմբակներ, կուսուսի դպրոցներ ու խմբակներ ղեկավարում են վոչ բավականաչափ պատրաստված, վոչ բավականաչափ տոկուն, կուսակցական պրոպագանդի իդեական-քաղաքական բարձր մակարդակն ու բոլշևիկյան վոգին ապահովելու անընդունակ մարդիկ: Հաճախ պարապմունքները կուսակցական դպրոցներում ու խմբակներ... նց են կացնում ձևականորեն, ցածր մակարդակով և կուսակցության անդամների մեջ չեն դաստիարակում բոլշևիկյան սկզբունքայնություն, անհաշտություն և հեղափոխական աչալրջություն:

Մի շարք զորամասերում հայտաբերված են կուսակցական ուսուցման վատ կազմակերպման վրդովեցուցիչ փաստեր (կուսակցական ու կոմյերիտական դպրոցների մեխանիկական համալրում առանց հաշվի առնելու կոմունիստների ու կոմյերիտականների պատրաստության մակարդակը, պարապմունքների ձախողում, վատ հաճախելություն, պարապմունքները գրականությամբ ու կուլտուրական շենքով չապահովելը): Առանձին ղեկավար քաղաշխատողներ իրենք շատ վատ գիտեն կուսակցության պատմությունը, առանց վորի վոչ մի քաղաշխատող չի կարող լինել մասսաների բոլշևիկյան ղեկավար, կազմակերպիչ, դաստիարակ:

ԲԳԿԲ Քաղվարչությունն առաջարկում է.

1. Կազմակերպել կուսակցության պատմության սիստեմատիկ ուսումնասիրություն ամբողջ պետկազմի ... ԲԳԿԲ Քաղվարչության կուրս... ակել ՀամԿ(բ)Կ պատմության ... պարապմունքների ուսումնա

... ՀՍԽՀ-ССР ... А. МОСН КАМ ...

26 FEB 2014
42.147

կան պլանները, առաջադրելով հատկապես բարձր պահանջներ դեպի քաղաշխատողները, ինչպես նաև դեպի միահրամատարները։

2. Քաղորգանների պետերին անձամբ ստուգել մարքս-լենինյան ուսուցման ու կուսլուսի ղեկավարների ամբողջ կազմին, անմիջապես հեռացնելով պրոպագանդիստական աշխատանքից բոլոր նրանց, ովքեր բավականաչափ պատրաստված չեն, բավականաչափ տոկուն չեն, ցույց չեն տվել բոլշևիկյան հաստատակամություն ու անհաշտություն օպորտունիստների դեմ մղած պայքարում։ Անվերապահորեն կատարել ԲԳՆԲ Քաղվարչության դիրեկտիվներն այն մասին, որ բոլոր կոմիսարները, քաղմասի ոգնականները, պատասխանատու քարտուղարները և քաղորգանների աշխատողները պետք է անձամբ վարեն պրոպագանդիստական աշխատանքը։ Վերացնել ղեկավարների տեղակալների ինստիտուտը, որ մտցված է մի շարք զորամասերում՝ հակառակ ԲԳՆԲ Քաղվարչության ցուցումների։ Յուրաքանչյուր առանձին դեպքում ղեկավարների փոխարինումը կատարել ոչ այլ կերպ, քան քաղբաժնի պետի թույլտվությամբ։

3. Ապահովել պրոպագանդիստների լուրջ պատրաստությունը։ Դիվիզիական կուսակցական դպրոցների կազմի մեջ կազմակերպել պետկազմի մարքս-լենինյան պատրաստության և կուսակցության պատմության ուսումնասիրության խմբակավարների սեմինարներ, հրամկազմին պատկանող այն բոլոր պրոպագանդիստներին, որոնք հաճախում են սեմինարների պարապմունքները, ազատել մարքս-լենինյան պատրաստության խմբակների պարապմունքներից։

4. Ապահովել առանց բացառության բոլոր ունկնդիրների կողմից պետկազմի մարքս-լենինյան պատրաստության և կուսակցության լուսավորության յուրաքանչյուր պարապմունքին հաճախումը։ Պարապմունքներից ծայրահեղ դեպքերում ազատելը կարող է տեղի ունենալ միայն զորամասի կոմիսարի անձնական կարգադրությամբ, իսկ դիվիզիական կուսդպրոցի և մարքս-լենինյան պատրաստության դիվիզիական խմբակների նկատմամբ միայն քաղբաժնի պետի թույլտվությամբ։

Քաղբաժինների պետերը պետք է անձամբ հետազոտեն մարքս-լենինյան ուսուցման խմբակների և կուսլուսի դպրոցների պարապմունքների ձախողման յուրաքանչյուր առանձին դեպքը և խիստ պատժեն հանցավորներին։ Կուսլուսի դպրոցների ու խմբակների պարապմունքների դասացուցակը զորամասերում կազմել այնպիսի հաշվով, որ ապահովված լինի կոմիսարի, պատասխանատու քարտուղարի, դնդի պրոպագանդի հրահանգչի, դպրոցների ղեկավարների ու խմբակավարների համար մնացած դպրոցների ու խմբակների պարապմունքներին հաճախելու հնարավորությունը։

5. Սահմանել այնպիսի կարգ, որ կուսլուսի դպրոցի ու խմբակի յուրաքանչյուր պարապմունքն ավարտելուց անմիջապես հետո զորամասի կոմիսարը (քաղմասի ոգնականը), կուսբյուրոյի քարտուղարը, պրոպագանդի հրահանգիչը լիովին իրազեկ լինեն այն մասին, թե ինչպես է անցել այդ պարապմունքը։ Կուսակցական բյուրոյի յուրաքանչյուր նիստում լսել պատասխանատու քարտուղարի և պրոպագանդի հրահանգչի



Բ-27

ինֆորմացիան զորամասում կուսդպրոցների, խմբակների և պետկազմի մարքս-լենինյան պատրաստության խմբակների անցկացրած պարապմունքների արդյունքների մասին։

6. Հատուկ ուշադրություն նվիրել ՀամԿ(բ)Կ պատմության ուսումնասիրությանը կուսբյուրոյի քարտուղարների, կուսկազմակերպիչների ու կուսակտիվի կողմից։ Սիստեմ դարձնել վորակյալ զեկուցումներ անցկացնելը կուսակցության պատմությունից զորամասերի կուսակտիվի համար։

ԲԳՆԲ Քաղվարչության կուլտպրոպին մշակել այդ զեկուցումների թեմաները։

Բարձրացնել պատշաճ բարձրության յերեկոյան կոմվուզների և դիվիզիական կուսակցական դպրոցների աշխատանքը։

ԲԳՆԲ Քաղվարչության կուլտպրոպին հետազոտել կուսլուսի այդ օղակներում գործի դրվածքը և 1935 թվի ապրիլին հրավիրել խորհրդակցություն դիվիզիական կուսդպրոցների ու յերեկոյան կոմվուզների աշխատանքի վերաբերյալ։

7. Թեկնածուական ու կոմյերիտական դպրոցներում բոլոր թեմաների մշակման պրոցեսում լուսաբանել մեր կուսակցության տակտիկայի կարևորագույն մոմենտները՝ հակակուսակցական իդեոլոգիաների ու խմբավորումների դեմ մղած պայքարում։

Այդ դպրոցների համար սահմանված ծրագրերի անցումն ավարտելուց հետո ունկնդիրների հետ մշակել մի շարք թեմաներ կուսակցության պատմության հիմնական էտապներից, մանավանդ՝ կուսակցության 1917 թվի հետհոկտեմբերյան պատմությունից։ Կուսակցության պատմության խմբակներում պարապմունքների պլանը կառուցել այնպես, վոր 1935 թվի մայիսից սկսվի կուսակցության՝ 1917 թվի Հոկտեմբերից հետո պատմության մշակումը և ամբողջ ծրագիրն ավարտվի ընթացիկ տարում։

8. Նավատորմների քաղվարչություններին հատուկ ուշադրություն դարձնել, թե ինչպես է դրված քաղպարապմունքների կարգով կուսակցության պատմության դասավանդումը 3-րդ և 4-րդ տարիների ծառայության կարմիր նավատորմայիների հետ, ստուգել այդ պարապմունքները անցկացնող խմբակավարների ամբողջ կազմը, պատշաճ բարձրության վրա դնելով խմբակավարների պատրաստությունը և կոնտրոլը նրանց աշխատանքի նկատմամբ։

9. Ռազմական շրջանների ու նավատորմների քաղվարչությունների պետերին հատուկ հսկողության տակ առնել կուսակցության պատմության ուսումնասիրությունը քաղկազմի կողմից, մանավանդ՝ քաղբաժինների պետերի և զորամասերի կոմիսարների (քաղմասի ոգնականների) կողմից, ամեն կերպ ոգնություն ցույց տալով նրանց, պարբերաբար կանչել առանձին քաղաշխատողների և ստուգել նրանց գիտելիքները կուսակցության պատմությունից։ Գնդերի այն կոմիսարների (քաղմասի ոգնականների) համար, վորոնք առանձնապես պատրաստության կարիք են զգում, շրջաններին կից կազմակերպել հավաքներ կուսակցության պատմության կուրսն անցնելու համար։

10. Կուսակցության պատմության այն նյութերը, վոր կան կ. բանակային քաղդասագրքում և կուսլուսի համար դասագրքերում, անհրաժեշտ է լրացնել վերջին ժամանակվա փաստերով, քաղաքական հետևություններ հանելով այն անցքերից, վորոնք

կապված են զինովևյան հակախորհրդային հակահեղափոխական խմբակի կողմից ընկ. Կիրովի չարանենգ սպանության հետ:

11. Շրջանների քաղվարչությունները ապահովել ՀամԿ(բ)Կ պատմության դասավանդման դրվածքի հսկողությունը ուսումնական ակադեմիաներում ու դպրոցներում, մանավանդ ուսումնա–քաղաքական դպրոցներում այնպես, որ ակադեմիաներն ու դպրոցներն ավարտող հրամատարներն ու քաղաշխատողները հուսալիորեն զինված լինեն կուսակցության պատմության, օպորտունիստների դեմ կուսակցության մղած պայքարի պատմության գիտելիքներով:

12. Վճռականապես վերացնել կուսակցության պատմության դասավանդման մեջ սերտողականությունը, անգիր անելը, թեթևամտությունը, հասնելով նրան, որ պրոպագանդիստներն ունենան դասավանդման պարզ, հասկանալի լեզու այնպես, որ կուսակցության պատմության ուսումնասիրությունը դառնա գրավիչ աշխատանք՝ լի հեղափոխական վոգևորությամբ: Կուսակցության պատմության ուսումնասիրությունը պետք է զինի յուրաքանչյուր կոմունիստին ու կոմյերիտականին մեր ժամանակակից պայքարի համար՝ հանուն կուսակցության գլխավոր գծի:

13. Սույն նամակը քննարկելու և պրոպագանդիստներին բացատրելու համար այն խնդիրները, որ ներկայումս դրվում են մարքս–լենինյան ուսուցման ու կուսլուսի առաջ, քաղօրգաններին անցկացնել բոլոր կայազորներում պրոպագանդիստների ժողովներ:

ԲԳԿԲ Քաղվարչությունը պահանջում է բոլոր քաղօրգաններից, կոմիսարներից ու կուսակցական կազմակերպություններից օրինակելիորեն դնել կուսակցական պրոպագանդը և կուսակցության պատմության ուսումնասիրությունը:

ԲԳԿԲ քաղօրգաններն ու կուսկազմակերպությունները պետք է ապահովեն ՀամԿ(բ)Կ պատմության դասավանդման մեջ բարձր աչալրջություն, կանխելով մեր կուսակցության պատմությունը խարդախելու ամենափոքր փորձերը, արմատախիլ անելով յերկերեսանիների կողմից հընարավոր վոտնձգությունները՝ կուսակցության պատմության «փաստաթղթերով («документаль») ուսումնասիրության դրոշակի տակ զբաղվելու կուսակցության կողմից ջախջախված թշնամական պլատֆորմի մասսայականացմամբ:

ԲԳԿԲ Քաղօրգաններն ու կուսկազմակերպությունները պարտավոր են և ունեն բոլոր հնարավորությունները հասնելու նրան, որ կուսակցության յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր կոմյերիտական, յուրաքանչյուր հրամատար ու քաղաշխատող խորապես ուսումնասիրի, գիտենա ու հասկանա մեր կուսակցության պատմությունը, գիտենան, թե ինչպես է կուսակցությունը պայքարել, հաղթահարել ու ջախջախել տրոցկիստներին «դեմոկրատական ցենտրալիստներին», «բանվորական օպոզիցիային», զինովևյականներին, աջ ուկլոնիստներին, աջ-ձախ այլանդակներին և ուրիշներին: Այդ պահանջն առաջին հերթին վերաբերում է քաղաշխատողներին, միահրամատարներին ու Կարմիր բանակի կուսակտիվին, վորոնց համար մեր կուսակցության պատմության յուրացումը կարևորագույն զենք է կարմիր բանակային մասսաների բոլշևիկյան դաստիարակության ու մեր լենինյան կուսակցության ու մեր մեծ առաջնորդ և ուսուցիչ ընկ. ՍՏԱԼԻՆԻ շուրջն ամուր համախմբման համար:

ԲԳԿԲ Քաղվարչության
պետ՝ ԳԱՄԱՐՆԻԿ

8 մարտի 1935 թ.
№ 23.

# ՈՒՍՄԱՆ ՊԼԱՆ

## ԲԳԿԲ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԱՄԿ(Բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## 1935 Թ. ԱՊՐԻԼ—ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

### ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Կուսակցությունը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության համար մղած պայքարում (1917 թ. փետրվար—հոկտեմբեր)։ Կուսակցությունը Փետրվարյան հեղափոխության շրջանում։ Լենինի ապրիլյան թեզիսները։ Ապրիլյան կոնֆերանսը։ Հուլիսյան օրերը։ Կուսակցությունը Հոկտեմբերի համար մղած պայքարում, ընդդեմ շտրեյկբրեխերների — Զինովյևի և Կամենևի։ (3 պարապմունք)։

2. Կուսակցության պայքարը կապիտուլյանտների դեմ աջից և «ձախից»—Զինովյևի, Կամենևի, Տրոցկու, «ձախ» կոմունիստների դեմ—պրոլետարական դիկտատուրայի առաջին շրջանում։ Բրեստի հաշտությունը (2 պարապմունք)։

3. Կուսակցության պայքարը տրոցկիզմի և «դեմոկրատական ցենտրալիզմի» խմբակի դեմ ռազմական կոմունիզմի և քաղաքացիական պատերազմի տարիներին։ (2 պարապմունք)։

4. Նեպին անցումը և կուսակցության պայքարը տրոցկիզմի, «բանվորական օպոզիցիայի» և «դեմոկրատ ցենտրալիստների» դեմ։ (2 պարապմունք)։

5. Կուսակցության պայքարը տրոցկիզմի դեմ 1923-1924 թ. թ. (2 պարապմունք)։

6. Վերականգնման շրջանին անցումը և կուսակցության պայքարը զինովյևական օպոզիցիայի դեմ։ ՀամԿ(բ)Կ XIV համագումարի պատմական նշանակությունը։ (2 պարապմունք)։

7. Կուսակցության պայքարը տրոցկիստական-զինովյևական բլոկի դեմ և նրա ջախջախումը։ ՀամԿ(բ)Կ XV համագումարը և նրա վորոշումները։ (2 պարապմունք)։

8. Վերակառուցման շրջան։ Մեծ բեկման տարի։ Կուսակցության պայքարը աջ օպորտունիզմի դեմ վորպես գլխավոր վտանգի դեմ և աջ օպորտունիստների ջախջախումը։ ՀամԿ(բ)Կ XVI համագումարը վորպես ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման համագումար։ (2 պարապմունք)։

9. Կուսակցությունը ՀամԿ(բ)Կ XVI և XVII համագումարների միջև ժամանակաշրջանում։ (2 պարապմունք)։

10. ՀամԿ(բ)Կ XVII համագումարը վորպես հաղթողների համագումար, վորպես անդասակարգ սոցիալիստական հասարակակարգ կառուցելու համագումար։ Դասակարգային պայքարի առանձնահատկությունները տվյալ շրջանում և զինովյևական ակահեղափոխական խմբակի ջախջախումը։ Դասակարգային աչալրջության և բոլշևիկյան մարտնչողականության բարձրացման խնդիրները մրողջ աշխատանքում։ (2 պարապմունք)։

Այն պետկազմը, վորն առաջուց չի անցել կուսակցության պատմության կուրսը, նախքան ուսման պլանում մատնանշած թեմաների անցնելը, առաջարկվում է կարդալ հետևյալ դասախոսությունները.

1. Բոլշևիզմի ծագումը և Լենինի պայքարը նոր տիպի կուսակցության համար (1890—1903 թ. թ.)։

2. Բոլշևիկների կուսակցությունը 1905—1907 թ. թ. հեղափոխության ժամանակ և ռեակցիայի տարիներին։

3. Բոլշևիկները հեղափոխական նոր վերելքի ժամանակաշրջանում և ...երիալիստական պատերազմի տա...րին։

Կուսակցության պատմության բոլոր թեմաների ուսումնասիրությունն որգանապես պետք է կապված լինի ընթացիկ քաղաքականության հարցերի հետ։

Կուսակցության պատմության պարապմունքները պետկազմի հետ պետք է անցնել ամսվա մեջ յերեք անգամ 3-ական ժամ։ Գերակետիկ կրտսեր հրամատարներն այս ուսման պլանում նշված թեմաներն ... են քաղպարապմունքների ժա...

Քաղպարապմունքների ... վարները շարունակում են ԲԳԿԲ Քաղվարչության ք... մունքների մասին կազմի... ցուցումների համաձայն։ ...նում կուսակցության պա... նշված թեմաներից խմբակ... հետ մշակելու համար աշնան ... պե... և անցկացնել հատուկ հավաքներ։

Պետկազմի մարքս-լենինյան պատրաստության բոլոր ղեկավարներին պետք է հաստատեն անձամբ քաղբաժինների պետերը։

Ակադեմիաներում և ռազմական դպրոցներում բոլոր ունկնդիրների և կուրսանտների հետ, պետք է պարապմունքներ անցկացնել ուսման պլանում ցույց տված թեմաներից, հատկացնելով դրա համար 30 ժամ այն ժամանակից դուրս, վորը նախատեսված է ուսման պլաններով սոց-տնտեսական դիսցիպլիններն անցնելու համար։

Կուսակցության պատմությունն ուսումնասիրող խմբակներում — վոչ ուշ, քան մայիսի 1-ը, իսկ թեկնածուական և կոմյերիտական դպրոցներում—նրանց հիմնական ծրագիրը վերջացնելուց հետո, անցնել այս ուսման պլանում նշված թեմաների մշակմանը։

Կուսակցության պատմության բոլոր թեմաների վերաբերյալ ԲԳԿԲ Քաղվարչության Կուլտպրոպը «ԲԳԿԲ պրոպագանդիստ» ժուռնալի միջոցով կտա ուսուցման առաջադրանքները (թեմայի պլանը, գրականություն, մեթոդական ցուցումներ)։

ԲԳԿԲ Քաղվարչության Կուլտպրոպբաժնի պետ՝ ԽԱՐԻՏՈՆՈՎ

1935 թ. 20 մարտի

им. А. Мясникяна



ՊԵՏ ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ ԳԼԱՎԼԻՏ № 151

355.5
Բ-27

1 MAR 2010

ՀՀ Ազգային գրադարան
NL0211185

42.147